Social Security

Նպաստներ հաշմանդամության թյուններով երեխաների համար

2012թ.

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Ներածություն 4

Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) վճարումները հաշմանդամ ություններով երեխաների համար 5

SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը եւ ինչպես դուք կարող եք օգնել 13

Medicaid-ը եւ Medicare-ը 17

Երեխաների առողջության ապահովագրության ծրագրեր 18

Առողջապահական այլ ծառայություններ. 19

Ներածություն

Այս գրքույկը մինչև 18 տարեկան հաշմանդամ այն երեխաների ծնողների, խնամակալների կամ ներկայացուցիչների համար է, ում հաշմանդամությունը կարող է նրանց Լրացուցիչ ապահովության եկամուտի (SSI) վճարումներ ստանալու իրավասություն տալ: Սա նաեւ այն մեծահասակների համար է, որոնք հաշմանդամ են դարձել մանկության օրոք եւ որոնք կարող են իրավասու լինել Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության (SSDI) նպաստների համար: (Մենք այս SSDI նպաստը կոչում ենք որպես «երեխայի» նպաստ, որովհետեւ այն վճարվում է ծնողների Սոցիալական ապահովության հասույթի հաշվառմամբ):

Այս գրքույկը կօգնի Ձեզ կողմնորոշվել՝ արդյոք Ձեր երեխան կամ Ձեզ ծանոթ որևէ երեխա կարող է իրավասու լինել՝ SSI-ի կամ սոցիալական ապահովության նպաստներ ստանալու:

Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) վճարումները հաշմանդամ ություններով երեխաների համար

SSI-ը կատարում է ամսական վճարումներ ցածր եկամուտով եւ սահմանափակ միջոցներով մարդկանց, որոնք 65 տարեկան կամ ավելի մեծ են կամ էլ կույր կամ հաշմանդամ են: Մինչև 18 տարեկան Ձեր երեխան կարող է իրավասու լինել, եթե նա համապատասխանում է Սոցիալական ապահովության վարչության՝ հաշմանդամ երեխայի սահմանմանը, և եթե նրա եկամուտն ու միջոցները իրավասության սահմաններում են: SSI-ի վճարումների գումարը նահանգից նահանգ տարբերվում է, որովհետեւ որոշ նահանգներում SSI-ի վճարները ավելացվում են: Ձեր նահանգի SSI-ի ընդհանուր վճարման մասին կարող եք տեղեկանալ Սոցիալակն ապահովության ձեր տեղական գրասենյակից:

SSI-ի կանոնները եկամուտի եւ միջոցների մասին

Երբ մենք որոշում ենք, որ ձեր երեխան կարող է ստանալ SSI, մենք հաշվի ենք առնում ձեր երեխայի եկամուտը եւ միջոցները: Մեր կողմից հաշվի են առնվում նաեւ երեխայի տնային տնտեսությունում ապրող ընտանիքի անդամների եկամուտը եւ միջոցները: Այդ պայմանները կիրառվում են եթե ձեր երեխան ապրում է տանը: Դրանք կիրառելի են նաեւ եթե նա մնում է դպրոցում, բայց ժամանակ առ ժամանակ վերադառնում է տուն եւ գտնվում ձեր հսկողության ներքո:

Եթե ձեր երեխայի եկամուտը եւ միջոցները կամ երեխայի տնտեսությունում ապրող ընտանիքի անդամների եկամուտը եւ միջոցները գերազանցում են թույլատրելի գումարը, ապա SSI-ի վճարումներ ստանալու համար երեխայի դիմում-հայտարարագիրը մեր կողմից կմերժվի:

Մենք սահմանափակում ենք SSI-ի ամսական վճարումները մինչեւ 30 դոլարը, երբ երեխան գտնվում է բժշկական հաստատությունում, որտեղ իր խնամքի համար վճարում է առողջության ապահովագրությունը:

SSI-ի կանոնները հաշմանդամության վերաբերյալ

Ձեր երեխան պետք է բավարարի բոլոր հետեւյալ պահանջներին, որպեսզի համարվի հաշմանդամ եւ հետեւավաբար՝ իրավասու SSI-ի համար.

- Երեխան չպետք է աշխատի և վաստակի ամսական 1,010 դոլարից ավելի՝ 2012թ. համար: (Այս թիվը սովորաբար ամեն տարի փոխվում է): Եթե նա աշխատում է և վաստակում նշված գումարից ավելի, ապա մենք կհամարենք, որ երեխան հաշմանդամ չէ:
- Երեխան պետք է ունենա ֆիզիկական կամ մտավոր վիճակ կամ վիճակների համակցություն, որը հանգեցնում է «նկատելի եւ ծանր ֆունկցիոնալ սահմանափակումների»: Դա նշանակում է, որ այդ պայմանները պետք է լուրջ սահմանափակեն ձեր երեխայի գործողությունները:

- Երեխան պետք է իր հաշմանդամության հետևանքով առնվազն 12 ամիս անգործունակ լինի, կամ պետք է ակնկալվի, որ նա կարող է անգործունակ դառնալ կամ մահանալ:

Եթե Ձեր երեխայի վիճակն առնվազն 12 հաջորդական ամիսների ընթացքում հանգեցնում է «գործելու արտահայտված և ծանր անկարողության», ապա մենք կհամարենք, որ Ձեր երեխան հաշմանդամ է: Սակայն եթե երեխայի վիճակը չի հանգեցնում նման սահմանափակումների կամ չի հանգեցնում դրանց՝ առնվազն 12 ամսվա ընթացքում, ապա մենք կհամարենք, որ Ձեր երեխան հաշմանդամ չէ:

Ձեր երեխայի վիճակի մասին տեղեկատվության ապահովումը

Ձեր երեխայի նպաստների համար դիմելիս, մենք կխնդրենք ներկայացնել երեխայի առողջական վիճակի մասին մանրամասն տեղեկատվություն եւ, թե ինչպես է այն ազդում նրա առօրյա գործունեության վրա: Մենք նաեւ կխնդրենք ձեր թույլտվությանը, որպեսզի այն բժիշկները, ուսուցիչները, թերապեվթները եւ այլ մասնագետները, որոնք ունեն տեղեկատվություն ձեր երեխայի մասին, ուղարկեն տեղեկատվությունը մեզ:

Եթե դուք ունեք ձեր երեխայի բժշկական կամ դպրոցական փաստաթղթերը, խնդրվում է բերել դրանք ձեզ հետ: Դա կարագացնի ձեր դիմում-հայտարարագրի հետ կապված որոշումը:

Ինչ է տեղի ունենում այնուհետեւ

Մենք ձեր կողմից ուղարկված ամբողջ տեղեկատվությունը ուղարկում ենք ձեր նահանգի Հաշմանդամության որոշման ծառայություններին: Այդ նահանգային գործակալության բժիշկները եւ պատրաստված այլ անձնակազմը կուսումնասիրի տեղեկատությունը եւ կխնդրի ձեր երեխայի բժշկական եւ դպրոցական փաստաթղթերը, ինչպես նաեւ ամբողջ մյուս տեղեկատվությունը, որը կպահանջվի ձեր երեխայի հաշմանդամ լինելը որոշելու համար:

Եթե նահանգի գործակալությունը չկարողանա կայացնել հաշմանդամության հետ կապված որոշումը, օգտագործելով միայն բժշկական եւ դպրոցական փաստաթղթերը եւ նրանց մոտ եղած այլ փաստերը, ապա նրանք կարող են խնդրել, որպեսզի տանեք ձեր երեխային բժշկական զննության կան ստուգման: Մենք կվճարենք զննության կամ ստուգման հետ կապված ծախսերը:

Մենք կարող ենք կատարել SSI-ի անմիջական վճարումներ ձեր երեխային

Պետական մարմնից կարող է պահանջվել երեքից հինգ ամիս՝ որոշելու՝ արդյոք Ձեր երեխան հաշմանդամ է: Սակայն որոշ առողջական վիճակների դեպքում մենք SSI վճարումներ ենք կատարում անմիջապես և մինչև վեց ամիս ժամանակահատվածում՝ մինչև պետական մարմինը որոշում կկայացնի Ձեր երեխայի հաշմանդամության վերաբերյալ:

Ստորև բերված են առողջական վիճակի մի քանի օրինակներ, որոնք համապատասխանում են վերը նշված պահանջին.

- ՄԻԱՎ-ի վարակը
- Բացարձակ կուրությունը
- Բացարձակ խլությունը
- Ուղեղի կաթվածը
- Դաունի սինդրոմը
- Մկանային դիստրոֆիան
- Ծանր մտավոր հետամնացություն (7 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխայի մոտ) և
- Ծնված երեխայի քաշը եղել է 20 ֆունտ և 10 ունցիայից պակաս

Եթե Ձեր երեխան համապատասխանում է նշված պահանջներից որևէ մեկին, ապա անմիջապես կսկսի ստանալ SSI-ի վճարումները: Այնուամենայնիվ, ձեր նահանգի գործակալությունը կարող է որոշել, որ ձեր երեխայի հաշմանդամությունը բավարար ծանր չէ SSI-ի համար: Եթե դա տեղի ունենա, ապա դուք չպետք է ետ վճարեք ձեր երեխայի կողմից ստացված SSI-ի վճարները:

SSI-ի հաշմանդամության վերանայումները

Երբ ձեր երեխան սկսում է ստանալ SSI, օրենքով պահանջվում է, որպեսզի մենք ժամանակ առ ժամանակ վերանայենք ձեր երեխայի առողջական վիճակը, որպեսզի ստուգվի իր դեռեւս հաշմանդամ լինելը: Այդ վերանայումը պետք է իրականացվի.

- Առնվազն յուրաքանչյուր երեք տարին՝ 18 տարեկանից երիտասարդ երեխաների համար, որոնց վիճակում ակնկալվում է բարելավում եւ

- Մինչեւ 1 տարեկանը՝ այն երեխաների համար, որոնք ստանում են SSI-ի վճարումներ իրենց ծննդյան ցածր քաշի պատճառով՝ եթե մենք չորոշենք, որ մինչեւ իրենց մեկ տարեկանը իրենց առողջական վիճակի բարելավում չի ակնկալվում եւ վերանայումը չնշանակենք ավելի ուշ ժամկետի համար:

Հաշմանդամության ստուգումը կարող է իրականացվել նույնիսկ այն դեպքում, երբ երեխայի առողջական վիճակի բարելավում չի սպասվում: Վերանայման ժամանակ դուք պետք է ներկայացնեք վկայություն, որ ձեր երեխան ստացել է բուժում, որը ձեր երեխայի առողջական վիճակում անհրաժեշտ է բժշկությամբ:

Ինչ է պատահում, երբ ձեր երեխան դառնում է 18 տարեկան

Հաշմանդամության նպատակներով SSI-ի ծրագրով երեխան դառնում է մեծահասակ 18 տարեկանում եւ երեխայի SSI-ի վճարումները ստանալու հարցը որոշելու համար մեր կողմից կիրառվում են տարբեր բժշկական եւ ոչ բժշկական կանոններ: Օրինակ, մեծահասակի կողմից SSI-ի ֆինանսական սահմաններին բավարարելու հարցը որոշելիս, մեր կողմից հաշվի չեն առնվում ընտանիքի անդամների եկամուտը եւ միջոցները: Մենք հաշվի ենք առնում միայն մեծահասակի եկամուտը եւ միջոցները: Մեծահասակի հաշմանդամությունը որոշելիս մեր կողմից կիրառվում են նաեւ մեծահասակների հաշմանդամության կանոնները:

- Եթե ձեր երեխան արդեն ստանում է SSI-ի վճարում, ապա նրա 18 տարեկանը լրանալիս մենք պետք է վերանայենք երեխայի առողջական վիճակը: Սովորաբար այդ վերանայումը

մենք անում ենք երեխայի 18-րդ տարեդարձին սկսվող մեկամյա ժամկետում: Ձեր 18-ամյա երեխայի հաշմանդամությունը որոշելիս մենք կկիրառենք մեծահասակների հաշմանդամության կանոնները:

- Եթե ձեր երեխան մինչեւ 18 տարեկան լրանալը չի բավարարել SSI-ի պահանջներին, որովհետեւ դուք կամ ձեր կինը(ամուսինը) ունեիք շատ եկամուտ կամ միջոցներ, ապա նա կարող է բավարարել SSI-ի պահանջներին 18 տարեկանում:

Լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրեք *Լրացուցիչ Սոցիալական Եկամուտը (SSI)* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-11000-AM):

Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության (SSDI) նպաստներ մանկուց հաշմանդամ մեծահասակների համար

SSDI-ի ծրագիրը վճարում է նպաստներ այն հաշմանդամներին, որոնք ունեն հաշմանդամություն, որը սկսվել է մինչեւ նրանց 22 տարեկան լրանալը: Մենք այդ SSDI-ի նպաստը համարում ենք որպես «երեխայի» նպաստ, որովհետեւ այն վճարվում է ծնողների Սոցիալական ապահովության հասույթի հաշվառմամբ:

Որպեսզի մեծահասակ հաշմանդամը իրավասու դառնա այս «երեխայի» նպաստնի համար, իր ծնողներից մեկը.

- Պետք է ստանալիս լինի Սոցիալական ապահովության ծերության կամ հաշմանդամության նպաստներ կամ
- Պետք է մահացած կամ աշխատած լինի Սոցիալական ապահովության ներքո:

Այս նպաստները վճարվում են նաեւ այն մեծահասակին, որը ստացել է խնամքի տակ գտնվող երեխայի նպաստները ըստ ծնողների Սոցիալական ապահովության հաշվառման մինչեւ 18 տարեկան լրանալը, եթե նա հաշմանդամ է դառնում 18 տարեկանում: Հաշմանդամության մասին որոշումը մեր կողմից կայացվում է մեծահասակների համար գործող կանոններով:

SSDI-ի հաշմանդամ մեծահասակների «երեխայի» նպաստները շարունակվում են մինչեւ երեխայի հաշմանդամ լինելը: Այս նպաստները ստանալու համար ձեր երեխան նախկինում աշխատած չպետք է լինի:

Ինչպե՞ս ենք մենք որոշում SSDI-ի նպաստների համար ձեր երեխայի հաշմանդամ լինելը

Եթե ձեր երեխան 18 տարեկան է կամ ավելի մեծ է, ապա իր հաշմանդամությունը մենք գնահատելու ենք նույն եղենակով, ինչ գնահատելու կլինեինք որեւէ մեծահասակի հաշմանդամությունը: Մենք ուղարկում ենք դիմումը Ձեր նահանգի Հաշմանդամության ստուգման ծառայություն, որն էլ մեզ համար որոշում է կայացնում՝ տվյալ երեխայի հաշմանդամության վերաբերյալ: Մեծահասակների համար հաշմանդամության գնահատման մասին մանրամասն տեղեկատվության համար, խնդրեք *Հաշմանդամության Նպաստներ* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10029-AM):

SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը եւ ինչպե՞ս դուք կարող եք օգնել

Սոցիալական ապահովության կամ SSI-ի վճարումների համար կարող եք դիմել, զանգահարելով Սոցիալական ապահովության **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով կամ այցելելով Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակը: Եթե դուք դիմում եք ձեր երեխայի համար SSI-ի վճարումների համար, ապա դիմելուց դուք պետք է ձեզ մոտ ունենաք իր Սոցիալական ապահովության համարը եւ ծննդյան վկայականը: Եթե դուք դիմում եք ձեր երեխայի համար SSDI-ի նպաստների համար, ապա բացի երեխայի Սոցիալական ապահովության համարից եւ ծննդյան վկայականից խնդրվում է ձեզ մոտ ունենալ ձեր Սոցիալական ապահովության համարը:

Դուք կարող եք օգնել մեզ որոշում կայացնելու հարցում.

- Ասելով մեզ հնարավորինս ավելի շատ ձեր երեխայի առողջական վիճակ(ներ)ի մասին.
- Տրամադրելով մեզ բժիշկների կամ հիվանդանոցների այցելությունների ամսաթվերը, հիվանդի հաշվի համարները բոլոր բժիշկների եւ հիվանդանոցների մոտ եւ ցանկացած այլ տեղեկատվություն, որը մեզ կօգնի ձեր երեխայի բժշկական փաստաթղթերը ստանալու գործում. ինչպես նաեւ
- Տրամադրելով մեզ ձեզ մոտ արդեն եղած բոլոր բժշկական տեղեկանքները կամ տեղեկատվությունը:

Ծանուցում. *Ձեզ պետք չէ տեղեկատվություն խնդրել ձեր երեխայի բժշկից: Մենք ձեր երեխայի հաշմանդամության մասին որոշում կայացնելու համար պահանջվող բոլոր տեղեկաքների կամ տեղեկատվության համար կդիմենք ուղղակիորեն իրենց:*

Եթե ձեր երեխան 18 տարեկանից ցածր է եւ դիմում է SSI-ի համար, ապա դուք պետք է ներկայացնեք փաստաթղթեր, որտեղ նշված են ձեր, ինչպես նաեւ ձեր երեխայի եկամուտը եւ միջոցները: Մենք նաեւ կխնդրենք ձեզանից նկարագրելու, թե ինչպես է ձեր երեխայի հաշմանդամությունը ազդում իր առօրյա պայմաններում գործելու ունակությանը: Դրանից բացի, մենք կխնդրենք, որպեսզի ներկայացնեք ուսուցիչների, ցերեկային ժամերի խնամողների եւ ընտանիքի անդամների անունները, ազգանունները, որոնք կարող են տալ տեղեկատվություն, թե ինչպես է գործում ձեր երեխան: Եթե դուք ունեք որեւէ դպրոցական տեղեկանքներ, ապա դուք պետք է բերեք դրանք հարցազրույցի:

Բազում համայնքներում կատարվել են հատուկ նախապատրաստումներ կապված բժշկական սպասարկում մատուցողների, սոցիալական ծառայությունների գործակալությունների եւ դպրոցների հետ՝ ձեր երեխայի հայցին ընթացք տալու գործում մեզ օգնելու նպատակով: Այնուամենայնիվ, ձեր համագործակցությունը տեղեկատվություն եւ այլ փաստաթղթեր ստանալու հարցում մեզ կօգնի ավելի արագ ավարտելու մեր աշխատանքը:

Զբաղվածության աջակցության ծրագրեր հաշմանդամություններով երիտասարդ մարդկանց համար

Մենք ունենք մի շարք ուղիներ խրախուսեու երիտասարդ մարդկանց, որոնք ստանում են SSI-ի վճարումներ կամ SSDI-ի նպաստներ եւ որոնք ուզում են աշխատել:

SSI-ի համապատասխան.

- Երբ մենք հաշվում ենք ձեր երեխայի SSI-ի ամսական վճարումը, մենք հաշվի չենք առնում ձեր երեխայի եկամուտի մեծ մասը: Եթե ձեր երեխան 22 տարեկանից երիտասարդ է եւ հանդիսանում է դպրոցը կանոնավոր հաճախող ուսանող, ապա մենք լրացուցիչ հանումներ ենք անում իր ամեն ամիս ստացվող եկամուտից: 2012թ.-ին հաշմանդամ ուսանողները, որոնք 22 տարեկանից երիտասարդ են, կարող են իրենց ամսական հասույթից հանել 1.700 դոլար, տարեկան սահման ունենալով 6.840 դոլարը՝ SSI-ի համար իրենց եկամուտը հաշվարկելու ժամանակ: Այս սահմանները ամեն տարի աճում են:
- Ինքնաֆինանսավորման հասնելու պլանով («PASS»), 15 տարեկան կամ ավելի մեծ երեխան կարող է խնայել որոշակի եկամուտ եւ միջոցներ՝ կրթության եւ աշխատելու հնարավորություն ունենալու համար պահանջվող այլ բաների համար վճարելու նպատակով: SSI-ի նպատակով ձեր երեխայի եկամուտը հաշվարկելիս, մենք խնայված եկամուտը հաշվի չենք առնում: Ձեր երեխայի վճարման գումարը հաշվարկելիս, մենք խնայված եկամուտը եւ միջոցները հաշվի չենք առնում:

- Առողջական վիճակ(ներ)ի պատճառով աշխատել կարողանալու համար ձեր երեխան կարող է կարիք ունենալ որոշ առարկաների եւ ծառայությունների, ինչպիսիք են հաշմանդամային սայլակը կամ անհատական օգնականը: Երեխայի SSI-ի վճարումը հաշվարկելու ընթացքում, մենք ձեր երեխայի հասույթում հաշվի չենք առնի այդ առարկաների կամ ծառայությունների համար վճարված գումարը ամբողջությամբ կամ մասնակի:
- 15 տարեկանից բարձր ձեր երեխան կարող է ստանալ օգնություն կապված վերականգնման եւ ուսուցման հետ:
- Medicaid-ի ծածկույթը շարունակվելու է, նույնիսկ եթե ձեր երեխայի հասույթը բավականաչափ բարձր է SSI-ի վճարումը դադարեցնելու համար՝ եթե հասույթը չի գերազանցում որոշակի գումարից:

SSDI-ի համապատասխան.

- Մինչեւ 22 տարեկանը հաշմանդամություն ստացած մեծահասակը կարող է ստանալ նույն օգնությունը կապված աշխատանքային ծախսերի հետ, ինչ վերոհիշյալ SSI-ի երեխան, ինչպես նաեւ օգնություն վերականգնման եւ ուսուցման համար.
- Կանխիկ նպաստները կարող են շարունակվել մինչեւ անձի կանոնավոր կարգով աշխատել կարողանալը:
- Medicare-ը կարող է շարունակվել մինչեւ 93 ամիս (յոթ տարի, ինը ամիս):

Այս ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ մեր կայքում՝ ***www.socialsecurity.gov***, կամ զանգահարելով մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**:

Medicaid-ը եւ Medicare-ը

Medicaid-ը առողջապահական ծրագիր է ցածր եկամուտներով եւ սահմանափակ միջոցներով մարդկանց համար: Նահանգների մեծամասնությունում SSI-ի վճարումներ ստացող երեխաները բավարարում են Medicaid-ի պահանջներին: Շատ նահանգներում Medicaid-ը ստացվում է ինքնաբերաբար SSI-ի պահանջներին բավարարելու միջոցով: Ուրիշ նահանգներում դուք պետք է գրանցվեք դրա համար: Իսկ որոշ երեխաներ կարող են ստանալ Medicaid-ի ծածկույթը նույնիսկ եթե նրանք չեն բավարարում SSI-ի պահանջներին: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար ճշտեք Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակի, ձեր նահանգի Medicaid-ի գործակալության կամ ձեր հանագի կամ օկրուգի սոցիալական ծառայությունների գրասենյակի հետ:

Medicare-ը դաշնային առողջապահական ծրագիր է 65 տարեկան կամ ավելի մեծ մարդկանց համար, որոնք առնվազն երկու տարվա ընթացքում ստացել են Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստ: Ձեր երեխան կարող է անմիջապես ստանալ Medicare, եթե նա.

- Ունի խրոնիկ երիկամային հիվանդություն եւ երիկամային փոխպատվաստանյութի կամ պահպանման դիալիզի կարիք կամ
- Ունի Լու Գեհրիգի հիվանդություն (երկրորդային ամիոտրոֆիկ սկլերոզ):

Երեխաների առողջության ապահովագրության ծրագրեր

Երեխաների առողջության ապահովագրության ծրագիրը հնարավորություն է ընձեռում նահանգներին՝ ապահովագրել աշխատավոր այն ընտանիքների երեխաների առողջությունը, որոնց եկամուտը գերազանցում է Medicaid ստանալու համար պահանջվող սահմանը, բայց բավարար չէ՝ մասնավոր բժշկական ապահովագրություն ձեռք բերելու համար: Այս ծրագիրը տրամադրում է միջոցներ՝ դեղատոմսով դուրս գրվող դեղերի ձեռքբերման, ինչպես նաև տեսողության և լսողության խնդիրներ և հոգեկան խանգարում ունեցող անձանց խնամքի համար: Ծրագիրը գործում է բոլոր 50 նահանգներում և Կոլումբիա շրջանում: Ձեր նահանգի Medicaid-ի գրասենյակը կարող է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել այս ծրագրի մասին: Ձեր երեխայի համար հասանելի օգնության մասին հավելյալ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև ***www.insurekidsnow.gov*** կայքում կամ զանգահարելով՝ **1-877-543-7669** հեռախոսահամարով:

Առողջապահական այլ ծառայություններ

Ձեր երեխայի կողմից SSI ստանալու դեպքում, մենք ուղեգրելու ենք ձեզ այն տեղերը, որտեղ դուք կարող եք ստանալ առողջապահական ծառայություններ ձեր երեխայի համար: Այդ ծառայությունները համապատասխանում են Սոցիալական Ապահովության Ակտի (Social Security Act) Երեխաներ Հատուկ առողջապահական կարիքներով դրույթին: Այդ ծրագրերը սովորաբար կառավարվում են նահանգի առողջապահական գործակալությունների կողմից:

Այս ծառայությունները տարբեր անվանումներ ունեն՝ կախված նահանգից, օրինակ՝ Երեխաների առողջապահության հատուկ ծառայություններ, Երեխաների բժշկական ծառայություններ և Արատավոր երեխաների ծրագիր: Այս ծրագրերի մեծամասնությունը ծառայություններ է մատուցում կլինիկաների, մասնավոր բուժհիմնարկների, հիվանդանոցներին կից ստացիոնար և ամբուլատոր բուժկենտրոնների և համայնքային հիմնարկների միջոցով:

Նույնիսկ եթե ձեր երեխան SSI չի ստանում, այս ծրագերից մեկը կարող է ունակ լինել ձեզ օգնելու համար: Առողջապահության տեղական բաժինները, սոցիալական ծառայությունների գրասենյակները կամ հիվանդանոցները պետք է կարողանան ձեզ օգնել կապ հաստատելու Հատուկ առողջապահական կարիքներ ունեցող երեխաների ձեր տեղական ծրագրի հետ:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10026-AM
Benefits For Children With Disabilities
(Armenian)
January 2012